

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԹԻՓԼԻՍ ԺԱՄԱՆԵԼԸ:

Դեկտեմբերի 8-ին երեկոյեան 5 ժամի դնացքով Թիֆլիս ժամանեց Ազգիս ծերունագարդ Քահանայապետ և Սրբազնագոյն Կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Առաջինը, Նորին Սրբութեան ընդառաջել էր մինչև Ալեքսանդրապոլ թեմիս սրբ. Առաջնորդը. իսկ երկաթուղու կայարանում դիմաւորեցին Թիֆլիս գրտնուած բոլոր վարդապետները և մի խումբ քահանայք, պ. ոստիկանապետը, Թիֆլիսի նորընտիր քաղաքագլուխը, հայ երեսփոխանները, մի քանի հայ թերթերի խմբագիրներ, հասարակութեան այլևայլ դասերի ներկայացուցիչներ և ժողովրդի բազմութիւն:

Ճանապարհին գտնուած եկեղեցիների զանգերը աւետում էին ժողովրդի Վեհ. Հայրապետի գալուստը:

Վանքի աւագ եկեղեցու բակում, չնայելով որ անսկնկալ էր Վեհի գալուստը և Թիֆլիզի հասարակութեան անյայտ, այնուամենայնիւ խռնուած էր խուռն բազմութիւն յամբողջ հոգեւորական դասի և Ներսիսեան դպրոցի ուսուցչական և աշակերտական խմբերի հետ ի միասին:

Վեհափառը հոգեւորական դասի և պատգամաւորների ուղեկցութեամբ և ժողովրդի ցնծալից կեցցէներով ընթանալով դէպի վեհաւրան սանդուխների զլիւից օրհնեց ժողովուրդը, որոնց կեցցէները ձայնը զանգերի ղողանջիւնի հետ թնդացնում էին օդը:

Վեհաբանում նորին օծութեան ներկայացան զանազան պատգամաւորութիւններ և այնուհետև հանգիստ առաւ իւր համար պատրաստուած օթեանում:

Վանքի բակում պատրուատուած էր պատշաճաւոր լուսավառութիւն:

ՎԵՀ. ՀԱՅՐԻԿԻ ԿԻՍԱՐՁԱՆ

«Անահիտ» մէջ կարդում ենք, որ հայազգի զանդակագործ Պ. Յէր Մարութեանցը պատրաստել է ամենայն Հայոց

Վ.Կ. Կաթողիկոսի կիսարձանը, որ դրուած է ի ցոյց «Աշնան սալօնի» մէջ: Պարելպաճնակ մի խումբ հայեր ժողովրդական հանգանակութեամբ գնելով այն և յօրինել տալով նորա պղնձէ վերարտադրութիւնը, նուիրել են վեհափառ կաթողիկոսին որպէս երախտագիտութեան նշան և հիացման արտայայտութիւն արտասահմանի գաղութների կողմից նորին սրբութեան 85 ամեայ տարեդարձի առթիւ: Այս գաղափարն իրագործելու համար ընտրուած է մի Յանձնախումբ, իսկ հանգանակութեան մասնակցում են արտասահմանի բոլոր հայերը:

ՐԱՏԱՒԻԱՅԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ձեռքն ընկաւ Նոր-Ջուղայի Ամենափրկչի վանքի տըպարանում, սոյն 1904 թուին լոյս տեսած «Ճարտը տեղեկագիր հանրական ատենին յանձանձանաց Հայ ազգային հաստատութեանց Բատաւիոյ վասն 1903 ամիս գրքոյի, որ շատ խառն-ի խառն լինելով կազմած միջից հազիւ կարելի եղաւ իմանալ հետեւեալ տեղեկութիւնները.

«Հանրային ատենի հոգացողութեան ենթարկուած են հետեւեալ հայ հաստատութիւնները՝

Բատաւիայի ս. Յովհաննէս եկեղեցին, Նոյնտեղի հայոց «Մանուկ և Յարութիւն ուսումնարանը», Բատաւիայի բարեգործական «Հայկեան միաբանութիւնը», Նոր-Ջուղայի ազգ. հաստատութիւնները, այն է՝ կենդրոնական երկսեռ դպրոցները, Մ. և Յ. ուսումնարանները, Աղքատաց Արկղը, Ամենափրկչի վանքը և տպարանը, ս. Վատարինէ դպրոցը, Սանգիբարանի ս. Պօղոսի դպրոցը, ս. Մինաս և ս. Յովհաննէս եկեղեցիները:

Իժմադտաբար շատ աղօտ յիշատակութիւններ կան տեղեկագրում վերը յիշած ազգային հաստատութիւնների մասին, ինչպէս նաեւ առաջ չեն բերուած նոցա նիւթական և բարոյական դրութեան մասին մանրամասն տեղեկութիւններ, կայ միայն մի ընդհանուր խիստ համառօտ հաշուէկշիւ, որից երեւում է, որ ս. Յովհաննէս եկեղեցին 1903 թուին մուտք է ունեցել 187910,10 լի, իսկ ծախք 95600, լի, ունի կալուածներ և դրամով 92310,10 լի:

Կ. ՆԱԵԱՆԻ ՅՕՅԵԼԵԱՆ

Ինչպէս արդէն անցեալ անգամ հաղորդել էինք, նոյեմբերի 6-ին Ս. Պ. Բուրգում կատարուել է յայտնի գրագէտ և արեւելեան լեզուների մագիստրոս Վարապետ Յ. Սգեանի պետական ծառայութեան և գրական գործունէութեան յիսնամեա յօբելեանը: